

ԱՐՅԱԽԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խանյան Ս. (ԱրՊՀ, ԼՂՀ)

atayan2011@rambler.ru

Բանալի բառեր՝ Արցախ, Շուշի, Հայաստան, Մաքառում, Գրականություն, Ազատություն:

1. Հայոց հարուստ մշակույթի արարչագործությանն ի սկզբանե ակտիվորեն է մասնակցել նաև Մեծ Հայքի 10-րդ նահանգը՝ Արցախ աշխարհն՝ իր անցած ճանապարհի բոլոր շրջափուլերում: Այս առումով բավական է մատնացույց անել Շուշին, որ մինչև 1920 թ. իր մտքի թռիչքներով հիացրել է ոչ միայն հայությանը, այլև աշխարհին:
2. Մինչև 1920 թ. ողբերգական գարունը Շուշիում լույս են տեսել 21 անուն թերթեր, որոնցից 19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն: Դրանք են. «Ազգագրական հանդես», «Աշակերտ», «Ապառաժ», «Արցախ», «Գործ», «Եռանդ», «Ծիածան», «Ծիծաղ», «Հայկական աշխարհ», «Ղարաբաղ», «Ղարաբաղի սուրհանդակ», «Միրաժ», «Միություն», «Նեցուկ», «Նոր կյանք», «Պայքար», «Սրինգ», «Փայլակ», «Քնար խոսնակ» պարբերականները: Ռուսերեն լույս են տեսել «Շուշինսկի լիստոկ» և «Շուշինսկայա ժիզն» թերթերը:
3. Վերոնշյալ թերթերի էջերում հանդես են եկել գրողներ Մուրացանը, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափագյանը, Մելիք Շահնազարյանը (Տմբլաշի Խաչան), Գրիգոր Ներսիսյանը և ուրիշներ:
4. 1920 թ. մարտի 22-ին ազերի թուրքերը կրակի մատնեցին քաղաքը, սրի քաշվեցին տասնյակ հազարավոր անմեղ հայեր: Խորհրդային կարգերի հաստատումը ևս ծանր եղավ Արցախի համար: Այն բոլշևիկների, առանձնապես Լենինի և Ստալինի թուրքամետ քաղաքականության հետևանքով և Աթաթուրքի ու

Նարիմանովի նենգամիտ պահանջով Արցախը նետվեց նորաթուխ Ադրբեջանի հայակուլ էրախը: Սկսվեց Արցախի հայաթափման ստոր քաղաքականությունը:

5. 1988-1994 թթ. Արցախյան ազգային ազատագրական պայքարի շնորհիվ հայ մոր գիրկը վերադարձվեց Շուշին, որ արդեն շնչում և արարում է հայերեն: Շարունակվում է ավանդույթը՝ «Մեկ ժողովուրդ, մեկ գրականություն» սկզբունքով:
6. Արցախի հայախոս ճակատագրի գեղարվեստական պատկերն ստեղծեցին արձակագիրներ Ս. Աբրահամյանը՝ «Սերունդների հետ», Ի. Ալավերդյանը՝ «Սիսակյանի օրագիրը», Բ. Ուլուբաբյանը՝ «Թարթառ», «Հայրենի հող», «Սարդարապատ» վեպերով, Բ. Ջանյանը, Ի. Պետրոսյանը՝ բանաստեղծությունների ժողովածուներով:
7. 1988 թվականից սկսած Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին հանդես եկան արձակագիրներ Մ. Հովհաննիսյանը, Կ. Դանիելյանը, Մարտիրոս Ոբնը, Մ. Հայկը, Ա. Ղահրիբյանը, Կ. Գաբրիելյանը, Վ. Բաղդյանը, Ն. Սողոմոնյանը, բանաստեղծներ Գ. Գաբրիելյանը, Հ. Բեգլարյանը, Վ. Հակոբյանը, Ս. Խանյանը, Ն. Ավագյանը և ուրիշներ: Նրանք հայ գրականության բազմերանգ քարտեզի վրա նախագծում են իրենց կենսական տարածությունը: Դա արցախյան նախաստեղծ բնության ծփանքների մեջ հաղթանակած արցախցու հայակերտ հոգեբանության պատկերն է:
8. 20-րդ դարի վերջին Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի շնորհիվ անկախ և ազատ ապրելու իրավունքը նվաճեց Արցախ աշխարհը: Միաժամանակ հղիվվում է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը, որը խորհրդանշում է մեր համահայկական գրականության ապագա զարգացումը, որի մի անբաժան մասն Արցախում ստեղծվող հայ գրականությունն է:

Khanyan S. (Artsakh State University, Nagorno Karabakh Republic)